

## ԿԱՆՈՆ ՈՍԿԵՐԻՉ ԱՐՀԵՍՏԸՆՈՐԸՑ<sup>1)</sup>

### ԺԴ.

Ամեն մի օրհնուած վարպետ իւր, իւր տոհմի և զաւակների ապագալ հարկաւորութեան համար, պարտաւոր է շաբաթը մէկ շահի հատուցանել գանձարանին, կամ շաբաթէ շաբաթ, և կամ ամսէ ամիս։ Վերապատուած է լինում այն անձը, ով որ տարեկան 12 արասին տարուայ սկզբից միասին է վճարում, ժողովը պարտական է նորան գովել և պատուել, ինչպէս մի ժողովասէր և առատաձեռն մարդու։

### ԺԴ.

Երբ որ և է աշակերտ իւր արուեստի մի նըշան ցոլց կտալ չորս կառավարիչներին, որ գովեստի արժանի մի գործուած կլինի (միայն քննած ու վերահսու եղած, թէ իւր շինածն է և ոչ ուրիշի), կառավարիչները այդ աշակերտին վարպետ օրհնելուց լետոյ պէտք է պարզեատրեն այս ձեի վկալականով կամ Ատէստատով։

«Խորհրդարան պատուելի ժողովոյն ոսկեգործութեան, վերահսու եղեալ կատարելութեան արուեստի (Սարգիս Օհաննէսեանիդ), վասնորոյ ճեռնադրեցաք

<sup>1)</sup> Տես «Լումպ» 1898 թ. գիրք Ա.

զքեզ վարպետ, տալով զայս վկայութիմն ի մշտնջենաւոր պարծանս քեզ եւ անուան քումն:

Սորա համար նա հատուցանում է գանձարանին մի ընծալ ալին շնորհի և պատուի արժանաւորութեան համեմատ, որ ստացաւ: Ատէստատը ստորագրելով չորս կառագարիչները լանձնում են նորան ժողովի հանդիսի մէջ և ամենքը գովելով շնորհաւորում են նորան եւ այս նորա համար, որ ուրիշներն էլ տեսնելով արիանան իրանց գործի մէջ: Եւ այս վկայուած վարպետը միշտ յարգուած է լինելու ամենքի աչքում: Իսկ եթէ պատահմամբ մէկը անարգէ այս վկայուած վարպետին, ոս կարող է իւր վկայականը ձեռին մեծ համարձակութեամբ դիմել խորհրդարանին և բողոքել կառավարիչներին, և ալդպէս աւելի պատուով ստանում է իւր իրաւունքը: Անարգողն էլ աւելի է լանդիմաննում կառավարիչներից, որովհետև նա ոչ թէ միայն վարպետին է անարգել, այլ և խորհրդարանին: Այո՛, կգայ ժամանակ, երբ աւելի կլուսաւորուի ժողովը, աւելի կծաղկի արուեստը և աւելի կհարստանալ ժողովի գանձարանը: Այն ժամանակ խորհրդարանը ալդպիսի վկայուած վարպետներին բացի վկայականից՝ կարող է շնորհել նաև ոսկէ կամ արծաթի նշան արժանաւոր վերտառութեամբ արուեստի և շնորհաց պատուաւորութեան համեմատ:

### ԺԵ.

Ամեն տեսակ մուտքերը պահւում են յատուկ արկը. զի մէջ յատուկ պահպանութեամբ, գրով և տումարով, բացայատ ծանօթութիւններով, թէ երբ, ումից և ինչ արդիւնքներ են: Այս մուտքը լանձնւում է վերոյիշեալ չորս ընտրուած խորհրդականներին և ժողովի վերակա. ցուներին: Եւ երբ հարկ լինի չորս խորհրդականներին

փոխել, ուրիշ չորս խորհրդականների և նոցանից մի արուեստապետի ընտրութեան ժամանակ, նոր ընտրուած և հաստատուած կառավարիչները կպահանջեն հներից ինչպէս բոլոր նոցա գործերը, նոյնպէս էլ ժողովի գանձերը, հաշուով և տումարով, ծումարը պէտք է կազմած լինի և ժապաւէն անցկացրած ու հասարակաց կնքով կնքած. կնքոլ վերտառութիւնը կլինի այս. կնիք ժողովու ոսկերչաց. իսկ կնքոլ նշանը՝ մի օձ և նորա գլխին պսակ, որ նշանակում է թէ՝ խոհեմութիւնը պսակում է ամեն գործ, և հետևաբար այսպէս ամեն ժամանակ խորհրդականներին փոխելիս՝ նոցա գործերն էլ անցնում են միւսներին վերոյգրեալ եղանակով:

## ԺԶ.

Հասարակութիւնը պէտք է վերահասու լինի հասարակական գանձի որքանութեան այն ժամանակ՝ երբ ժողովը տարին մի անգամ միասին հաւաքուած կլինին, որպէս զի խորհրդականներն ու վերակացուները ամբամբաս մնան բոլոր ժողովի միաբանութիւնից և այդ պիտի լինի նոր տարի օրը, այսինքն յունուարի մէկը, այսպէս: Ալիքեստապետն, ալսինքն՝ ուստաբաշին միւս երեք խորհրդականների հետ ամբողջ ժողովի մէջ գանձի տումարը ներկայացնում է ժողովին և տալիս է ժողովի գրագրի ձեռին, և ժողովից երեք հոգի առաջ կգան տումարը տեսնելու, կկարդալ դպիրը և նոքա երեքը ի միասին, և երբ մի առ մի կծանօթանան մուտք ու ելքի ամբողջ տարեկան արգիւնքին, թէ ուր կամ ում է գանձը շահով տուած պահելու, և նոցա մուրհակները, բոլոր կարգով, մինչև որ ոչ մի երկրալութիւն չգտնեն նորա մէջ, յետոյ տումարը կլանձնեն կառավարիչներին և ժողովը կարձակուի:

## ԺԵ.

Հասարակական գանձք պէտք է գործադրէ ամեն ժամանակ և առանց խնայելու լարգոլ ժողովի անուան և օգտի համար և նոցա բոլոր զարմի և զաւակների օգտին, այս ձևով.

ա. Եթէ Արքունիքից հրաման ստացուի քաղաքիս բոլոր համքարներին դրամ տալու կամ եկեղեցաշինութեան, կամ աղքատների և կամ մի ուրիշ պիտուքի համար, պէտք է տրուի գանձարանից, որովհետև մեծ ամօթ է դռնէ գուռը մանգալ ժողովարութեան համար:

բ. Նմանապէս եթէ հարկաւորուի հալոց կամ վըրաց Ազգին ու եկեղեցիներին, պէտք է անտրտունչ վճարուի այս պատրաստ գանձարանից:

գ. Եթէ ժողովականներից մէկը ծերութեան կամ աշխարհի ուրիշ պատահարներից հիւանդանալ, էլ չը կարողանալ աշխատել և ոչ էլ տէր կամ գոլք ունենալ և ամեն կողմից անտէր ու անօգնական մնալ, մանաւանդ երբ զաւակների էլ տէր լինի, պէտք է ձմեռուան անձար ժամանակին, ծննդեան օրը, մեծ պահքի ապաշխարութեան օրերին, ս. Զատկին՝ գանձարանից տալ նորան գաղտնի ողորմութիւն, հաց, փալտ, գործի, նաղդ գրամ, ինչպէս չորսի, այնպէս էլ ութն ընտրեալների խորհրդով, որով կուրախանալ Աստուած և կօրհնէ ժողովն ու նորա արդիւնքները, նոցա մարմիններն ու հոգիները և դա մեծ անուն կլինի աշխարհի ամեն կողմ, ուր և կսուի այդ:

դ. Եթէ ժողովից մէկը մեռնի, որ գուցէ լետին աղքատութեան մէջ լինի և, բոլորովին անօգնական, ժողովը պարտաւոր է գանձարանից հոգալ նորա թաղման կարգը պատուով, նախ ի փառս Աստուածոյ, երկ-

բորդ ի պատիւ ժողովի անուան և հռչակելու նորա պատիւն աշխարհումս բարի օրինակ լինելու ուրիշ ժողովներին:

ե. Եթէ մի վարպետ գնում է ոսկի կամ արծաթ կամ ուրիշ բան և չունի գորա համար պատրաստ դրամ, ուրիշեց էլ չի կարողանում ձեռաց փող գտնել, գանձարանը պարտական է օգնել նորան կարողութեան համեմատ մեծ քննութեամբ, որ մի քանի օրից կամ շաբաթից յետու դարձնեւում է գանձարանին, մի ծաղիկ էլ աւելացնելով վրէն ի սէր հասարակութեան և գանձարանի օգտին: Օրինակ եթէ նա այնտեղից վաստակել է հինգ մանէթ, գանձարանին պիտի տալ մէկ աբասի և գանձարանի փողը երկու շաբաթից աւելի չպէտք է ուշացնէ: Խոկ եթէ մարդը հաւատարիմ և կարող անձն է, որից կասկած չկայ, պէտք է ստացուի մինչև ճ կամ 10 թուման և եթէ փողն ուշանալ նորա ձեռքին՝ մի ամսից աւելի չպէտք է մնալ, այն էլ՝ որ և է բան առնելու համար: Խոկ եթէ գրաւ և օրինաւոր սանաթ (մուրհակ) կտալ և տոկոսով կվերցնի, դա վերոյիշեալ կանոնից դուրս է, այլ պարտաւոր է նա իւր շահը տալ:

զ. Այս գանձարանը պէտք է ծառալէ ժողովի նաև այլ հարկաւորութեանց առանց իւր վնասի, բայց այդ թողնւում է ապագալին և իմաստուն կառավարիչների կառավարութեան, որովհետև ժողովի այս գանձը գոլանում է ժողովի արդիւնքներից, ուստի և պէտք է ծառալէ ժողովին, մեծին և փոքրին, աղքատին ու հարուստին, կարևոր ժամանակ առանց խնալելու, ինչպէս օրինակ՝ եթէ մէկի տանը մեռել պատահի կամ տունը քանդուի կամ սորա նման մի ուրիշ բան կամ թէ սաստիկ հիւանդանալ մինչև որ բժշկի կարօտի և ալն: Բայց պէտք է միշտ արթուն կենալ, որ ուրիշի վերալու չկոլչի, որովհետև այդ դէպքերում շահով պէտք

Ե վճարեն ընտրուած չորս կառավարիչները իրանց ունեցածից:

### ԺԲ.

Երբ Աստուծու օգնութեամբ և ժողովի համակամութեան շնորհիւ հասարակաց գանձի գումարը մեծանալ և շահով տրուի, պէտք է սակայն, որ հասարակական գումարի մի մասը մնալ գանձարանում առ ձեռն պատրաստ, մօտ հինգ կամ տասն թուման, կամ թէ աւելի շատ ժամանակի որպիսութեան համեմատ և կամ էլի աւելի, վերոյիշեալ կարիքի ալսինքն ժողովականների մեծին ու փոքրին օժանդակութեան համար մանաւանդ հարկաւոր իսկ է. վասնզի ժողովը նորա համար է աշխատում գանձն աւելացնել, որ հարկաւոր ժամանակ պէտք գալ իրան, ապա թէ ոչ բնչու է աշխատում և բնչ նպատակով է իւր արդիւնքից պակասեցնում, գանձարանին պահեստի դրամ տալով և ում կարող է պէտք գալ այն:

### ԺԹ.

Արժան է և խիստ հարկաւոր ալսպիսի լարգելի ժողովի պատուի ու անուան համար, որ առանձին մի տեղ լատկացնուի, ուր ժողովի չորս գլխաւորներն ու միւսները պատուվ նստին, որի անունը կլինի ԽՈՐՀԸՐԴԻՆԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ ՈՍԿԵԳՈՐԾԱՑ, խորհրդի իրաւանց և գատաստանի կառավարութեան և այլ պիտուքների համար, զարդարուած աթոռներով և սեղանով, փրկչական և կայսերական պատկերով։ Ուր և կըպահուին կանոնագիրը, տումարները, նոյնական գաւթարը, դաշինքներն ու գատաստանի վճիռների թղթերը, ուրիշներին տուած փողի մուրհակները և ժողովին պատկանեալ ամեն պի-

տանի իրերը, և ալլն: Որովհետեւ մեծ ամօթ է այսպիսի Աստուծով բարեկարգուած լարգելի ժողովի համար անվայել մի կրպակում կամ բացօդեալ և կամ եկեղեցիների առաջ նստել ու վերկենալ հին ու անվաւեր սովորութեան պէս, ինչպէս լինում էր սորանից առաջ նախնիք ների պարզմտութեան ժամանակ:

## ¶.

Ամեն շաբաթ չորս ընտրուած կառավարիչները 2 օր կժողովուին խորհրդարանը, երեքշաբթի և ուրբաթ և այնտեղ կմնան մինչև կէսօր՝ բողոքողների վէճերը վճռելու, հարկաւոր գործեր կարգի դնելու, ժողովին կարեոր խնդիրների և ուրիշ պատահած կարիքների մասին խորհրդակցելու համար, իրանց մօտ ունենալով իրեն խորհրդական իրանց գրագրին: Ժողովը պէտք է վերահսու լինի, թէ այն երկու օրերն են՝ երբ կարող են դիմել ընտրուած կառավարիչներին խորհրդարանում: Խոկ եթէ պատահի այսպիսի կարիք, որ բողոքաւորը գիւղ, քաղաք կամ հեռու տեղ է գնում և լատկացած օրերին սպասելու ժամանակ չունի, կառավարիչները բաց են անում խորհրդարանը և ուրիշ օրերին, բացի կիրակիից: և արժան իսկ է:

## ¶.

Ժողովն իւր կառավարիչներով մեծ պարտք պիտի համարին և յաւիտենական անփոփոխ լիշտատակ պիտի սահմանին որդէցորդի և աւելի հարկաւոր օրէնք հաստատեն այս.—որ երբ աշակերտ օրհնելու ժամանակը գալ, այն օրը ժողովը պատուիրում է իրանց քահանալին պատարագ մատուցանել և պատարագին լիշտ տան հին և նոր ննջեցնալ վարպետներին, երախտաւորներին

և բարելիշատակ նախնիքներին և իրանց պանծալի կառավարութեան և կարգադրութեան հիմնադիրներին, և պատարագից լետոյ քահանան կերթալ ժողովի հանդիսին, կօրհնէ աշակերտին և սեղանը, մէկ մէկ նշխար տալով կառավարիչներին և նոքա արժանաւորապէս վարձատրելով քահանալին՝ ճաշի կնստեն։ Իսկ քահանալին կդառնալ իւր տուն։

## Ի՞Բ.

Բացի բնական կիրակիները պահելուց, որ եկեղեցու սրբազն կանոններով ամեն քրիստոնէի պարտքն է, պէտք է պահել նաև Տէրունի և սրբոց այն օրերը, որ կանոնադրել են մեր ս. Հայրապետները։ Այսպէս էլ պէտք է պահել թէ սրբերի և թէ կալսեր ու կալսերազների Պրազնիկի օրերը, տէրութեան օրինադրութեամբ, զանցառուները կըլանդիմանուին և ըստ կարողութեան կտուգանուին գանձարանի օգտին։

## Ի՞Գ.

Ժողովի շատութեան պատճառով՝ պէտք է նոցա եր կուսի բաժնել՝ ննջեցեալը գերեզման տանելու համար. կէսը Հալուբար տանելու և կէսը տափիթալ. նախ՝ հեշտ հաւաքելու և երկրորդ՝ ժողովի օգտի համար. որովհետեւ եթէ կէսը գնալ ննջեցեալի, միւս կէսը իր գործին կըմնալ։ Իսկ հարկ եղած ժամանակ կամ պատօւաւոր նընջեցեալի վերալ և կամ նոցա տէրերի խնդրանքով և կամ մի ուրիշ կարևորութեան համար, կարելի է բոլոր բազմութեամբ գնալ և կառավարութեան դէմ չէ։

## Ի՞Գ.

Ժողովը մի քահանալ պէտք է ունենալ անփոփոխ

աշակերտ օրհնելու, ժողովի անդամներից որևէ մէկին անլայտ խնդրի համար երգմնեցնելու, մատաղի աղն օրհնելու, մանաւանդ ալլեալլ խորհրդի պէտք ածելու ամեն ժամանակ։ Այս քահանալին պէտք է լայտարարական խնդրով խնդրել վիճակաւոր Արհի եպիսկոպոսից։ այս քահանալին փոխել կարելի է որևէիցէ երևելի լանցանքի համար, օր. եթէ խառնակիչ լինի, կամ խորհրդաբար լայտնած խոստովանութիւնը բանայ և ուրիշ բանական պատճառի համար, միայն ծածկաբար լայտնելով լիշեալ հոգեսոր ծալրագոյն կառավարչին և այնպէս պատուով ճանապարհել։ Աւելի պատուաւոր կըմնալ այն քահանայն, եթէ ինքը հրաժարական տալ ժողովին։ բայց առաջ չորս կառավարիչները պէտք է քահանալին լայտնեն թէ դու էլ հարկաւոր չես մեզ և այսպէս պատուով ճանապարհեն և ոչ հրատարակեալ։ Կառավարութիւնը կարող է նոյն պէս փոխել իւր գրադրին, որ խորհրդականն է կառավարիչներին։ և պատուաւոր է։

### ¶.

Ամենից աւելի հարկաւոր է, որ ժողովի բոլոր անդամները, թէ մեծ և թէ փոքր, լարգելով պահեն միմեանց պատիւը։ մանաւանդ փոքրը մեծի. մեծը նա է, որ առաջ է օրհնուած։ Նախ որ փոքրը ժողովներում չհամարձակուի իր մեծից և պատուաւորից առաջ խօսել երկրորդ՝ շվատահանալ հացկերութիւն նրանից վեր նըստել և այլն։

Իսկ մեծը պէտք է պատուէ փոքրին, որ ինքն էլ նորանից պատուի, սիրէ որ սիրուի, բարութիւն անէ, որ նոյնն ընդունէ։ Հայկոյութիւնն ու անարդանքը մեծից փոքրը և փոքրից մեծը խստիւ արգելուած է։ Եթէ փոքրը մեծին հայհոյէ և անարդէ և մեծը վկաներով հաստատէ գլխաւոր կառավարիչների առաջ, ինչ պատ-

ճառով էլ լինի՝ չի կարող արդարանալ փոքրը, որովհետև եթէ նորանից նա որևէցէ պահանջ ունէր և կամ որևէ նախատինք էր կրել, կարող էր գրով կամ բերանացի ըողոքել կառավարիչների ատենին. լետոյ որովհետև նա համարձակուեցաւ յարգելի ժողովի օրէնքներն ու կանոնները ոտի տակ տալ, որոց ինքը լսել է իր ականջով և կամեցաւ ինքնազլուխ դատաւոր լինել, ուստի ալդպիսքն արժանի է դատապարտութեան մեծ անարգանքով չորս կառավարիչների առաջ և հասարակաց գանձարանին պիտի տուժէ ինչքան էլ արժան կդատեն կառավարիչները նորա կարողութեան չափ, և անարգելով նորան՝ համբուրել պիտի տան մեծի ձեռը և կարձակուի:

Եթէ կրկին անգամ յանդուգն վարուի դէպի նոյն տնձը կամ մի ուրիշը, գարձեալ նոյնքան պիտի վճարէ և կրկին պիտի դատապարտուի, բայց ութնից առաջ. իսկ թէ երրորդ անգամ կրկին՝ երեք անգամ աւելի կրտուժէ և կդատապարտուի տասներկուսի առաջ: Բայց եթէ չորրորդ անգամ անզգամանալ, ալդպիսին կմատնուի պօլիցալին յալտարար գրութեամբ և այնտեղ կը հատուցանէ ըստ արժանաւոյն և անարգուած կլինի ոսկերչաց բոլոր ժողովում:

Իսկ եթէ ալդ յանցանքի մէջ որ փոքրը գործեց, մեծը և նախապատիւը գտնուի, նորա պատիժը երկու անգամ մեծ է փոքրից, որովհետև նա չկարողացաւ իր պատիւը ճանաչել, ուստի արժան է որ նա կրկին անգամ աւելի անպատւութիւն ու պատիժ կրէ:

### Ի՞Զ.

Եթէ մէկը մի վարպետի մօտ տանէ արծաթ կամ ոսկի կամ քարեղէն, ալսինքն՝ ալմաս, եաղութ և ալլ ալսպիսէք, կամ շինելու կամ ծախու, ուրիշ վարպետներից ոչ ոք չհամարձակուի յալտնի կամ ծածուկ նեն-

գել իւր արուեստակցին, ալսինքն զալրացնելով նիւթի տի-  
րոջ և յետ առնել տալով, որ ինքը շինէ կամ գնէ. թէ-  
կուղ տարած էլ չունենայ, այլ միայն խօսած շինել տալու  
կամ ծախելու. այս դէպքումն էլ չպէտք է վնասէ նորա  
արդիւնքին, որով ապրելու է նա իր ընտանիքով և սա  
կատարեալ գողութիւն է և յափշտակութիւն։ Ուստի  
այս կանոնը կլինի ալդպիսիների համար։

Նախ՝ եթէ դեռ չէ շինել և տիրոջը տուել ու յալտ-  
նուի նորա նենգութիւնը, ալդպիսին կանչելու է չորս  
կառավարիչների ատեանը և ճշմարտութեամբ և արդա-  
րութեամբ վերահասու լինելուց իւտոյ՝ նորանից պէտք  
է վերցնել ոսկին կամ արծաթը և լանձնել նորան, ով  
առաջ է խօսել նիւթի տիրոջ հետ. նենգաւորին պէտք է  
սաստել ըստ արժանեոյն և կառավարիչները կըպարտա-  
ւորին նորան որ գանձարանին այն վարկի  $\frac{1}{5}$  մասը տայ,  
որ պիտի ստանար և խրատելով կարձակեն։ Եթէ դար-  
ձեալ այսպիսի անօրէն բան գործէ՝ կրկնապատիկ կը-  
տուժէ։ Իսկ եթէ երրորդ անգամ անէ՝ բոլոր վարկը կը-  
տուժէ կամ այն՝ ինչ որ պիտի վաստակէր այն գնելուց  
կամ վաճառելուց և կդատապարտուի բոլոր ժողովի մէջ  
ինչպէս Աստուծոյ օրէնքի և հասարակութեան հակա-  
ռակ. իսկ եթէ չորրորդ անգամ էլ գտնուի ալդ անօրէ-  
նութեան մէջ՝ ալդ ամենի մասին գրով կլայտնուի պօ-  
լիցիալին և կարտաքսուի ժողովից ինչպէս մշտական դա-  
տապարտուած և նորա անօրէն գործերը կգրուի հասա-  
րակաց լիշտակարանում կամ ժուռնալում ինչպէս յա-  
ւիտենական դատապարտութիւն նորան և ի զգուշու-  
թիւն հասարակութեան։

Բայց պիտի պարտաւորել նաև նորան, ով որ իրա-  
ւանց տէր եղաւ, գանձարանին ընծալել իւր շահած ար-  
դեանց  $\frac{1}{10}$  հասարակութեան օդտին։

## ԻԵ.

Եթէ մի վարպետ նենգէ մէկի ոսկին կամ արծաթը կշռի կամ մաքրութեան կողմից և ոսկու կամ արծաթի տէրը բողոքէ գլխաւոր կառավարիչներին, սոքա պարտաւոր են ամենաաես Աստուծոյ առաջ արդարութեամբ քննել, եթէ վարպետը յանցաւոր է՝ նորանից ծածուկ առնեն վնասը և տան տիրոջ և գողացածի <sup>1/5</sup> մասը հատուցանել գանձարանին, որ եթէ գողացածը 5 ապասի աժէ՛ տալու է 1 ապասի: Իսկ եթէ նոյնը կըկին բըռնուի գողութեան մէջ՝ նիւթի արժէքի կէսը կտուժէ, իսկ եթէ երրորդ անգամ՝ հաւասար կտուժէ. չըրըրդ անգամին՝ երկու այնքան կըտուժէ և ժողովում կիսալտառակուի և կարտաքսուի ժողովից 40 օր, յետոյ իւր ձեռագրով պայման կդնէ գլխաւոր կառավարիչների առաջ էլ չհամարձակուիլ այդ տեսակ խալտառակ բան անել և նորա անունը կդրուի տումարում կամ ժուռնալում ի նախատինս իւր և ալլոց օրինակ:

Միւնոյն կանոնն է պահւում և եթէ ակն, մարդարիտ և ուրիշ նիւթ լինի գողացած:

## ԻԸ.

Եթէ ժողովականներից մէկը ուրախութեան օրը հացկերութին հարբի և համարձակուի մէկին հալհոլել, կամ կռուել և կամ խփել, ով էլ լինի պէտք է արտաքսուի ժողովից և ուրախութիւնից և միւս օրը ծածուկ կկանչուի ատեան և կյանդիմանուի, կարողութեան չափ էլ տուգանք կտայ և խրատելով կարձակին նորան, որ չտարածուի: Եթէ դարձեալ պատահի՝ ութանք կյանդիմանեն և առաջուալ կրկինը կառնեն: Եթէ երրորդ անգամ էլ յանդգնի՝ կկանչուի 12 ի առաջ և խիստ կդատապարտուի ու երեք անգամ աւելի կտուժէ: Իսկ եթէ

չորրորդ անգամ էլ կրկնէ իւր անգգամութիւնը, կդատուի բողոք ժողովում, տուգանք չի տար, այլ յայտաբարութեամբ կտեղեկացուի պօլիցիալին՝ ինչպէս յանդուգն լիրը և ինելագար և խպառ կհեռացուի ժողովի ընկերակցութիւնից և նորա անունն ու արատքը կգուի հասարակութեան լիշտակարանում իբրև մշտական նախատինք նորան և ներկաների ու ապագալ եկողներին և զգուշութիւն:

### ԻՇ.

Ամեն անձ պարտական է ներկալ գտնուիլ իւր արհեստակցի լուղարկաւորութեան թաղման առաջին օրը և երկրորդ օրը այգին: Իսկ եթէ մէկը առանց կարեոր և բանաւոր պատճառի (և այն չորս կառավարիչների վերահասութեամբ) կպակսի այնտեղից, առաջին օրուան համար չորսի հրամանով իւր կտրողութեան համեմատ տուգանք կտալ, իսկ այգի համար նորա կէսը, չորսի առաջ կլանդիմանուի ու կարձակուի: Այս իրաւունքը ունին միայն օրհնուածները և ոչ թէ հրամանահաց տուողները: Իսկ այն ննջեցեալների վրալ պարտաւոր են գընալ, որոնք ստորագրել են, բացի սոցանից ոչ ոքի վըրալ պարտական չեն լինիլ, բացի նոցանից, որոնց տէրերը կամաւ կհրաւիրեն ժողովին: Հայրը, մայրը, եղբայրը, կինը, որդին, դուստրը՝ որ տուած կլինեն հասարակութեան անդամներից մէկին: Իսկ բաժանուած հօրեղբալների մօտ, օտար ժողովներին (այսինքն ուրիշ համքար), նոյնպէս մօրեղբօր, կնոջ եղբօր փեսալի և ուրիշների վրալ կարելի է գնալ հրաւերով և ոչ թէ ստիպմամբ:

Իսկ եթէ ննջեցեալը երախտապարտ իշխան է կամ արհեստից ձեռք վեր առած վարպետ, նոցա վերալ պէտք է գնալ, չգնացողը ենթարկւում է վերի կանոնին, և

միանդամայն չորս գլխաւոր կառավարիչները որոնց և  
հրամալեն, պարտաւոր են լսելու հետեւ և չլսողները  
լանդիմաննում են վերոլիշեալ կանոնով:

## Լ.

Եթէ ժողովից երկուսը ուղենան ընկերանալ ոսկեր-  
չութեան արհեստին մէջ, պէտք է ալդ լինի կառավա-  
րիչների խորհրդով, վերահասութեան և ընկերագիրն էլ  
նոքա պիտի ստորագրեն, իսկ վրէն ժողովի զրագիրն ու  
ինքն էլ երբև վկալ ստորագրէ. թուղթը պէտք է լինի  
զէրբօվօլի և ոչ հասարակ. Երբ ընկերութիւնը կալանալ  
երկուսն էլ պարտաւոր են գանձարանին վճարել տուրք  
ըստ կարողութեան, չորից որոշմամբ:

Նոյնպէս բաժանուիլը պէտք է լինի չորսի վերա-  
հասութեամբ և բաժանուածները վճարում են գանձա-  
րանին ընկերանալիս տուածի կէսը. Ընկերագրութեան  
պատճէնը կգրուի ժուռնալում ապագալի համար. կա-  
րելի է ընկերագիրը կորչի. Այսպէս էլ արուեստի վե-  
րաբերեալ ամեն գրութիւնների պատճէնները պիտի  
գրել այնտեղ:

## Ա.Ա.

Նախնեաց աւանդութիւնը պիտի հաստատ մնալ,  
այն է՝ գեղի մատաղը, աներանց մատաղը և տղալի մա-  
տաղը, բայց առաջուալ պէս չպիտի լինի ոչխար ու  
գինի, այլ փող, կարողութեան չափ և կգրուի ժողովի  
լիշտակարանում անթերի և անլաւելուած:

## ԼԲ.

Հացկերութի, կամ վարպետի օրհնութեան և կամ  
մատաղի օրերին ծախսը լինում է գանձարանից չորսի  
խորհրդով և կառավարութեամբ, նոյնպէս էլ նստելու  
և վերկենալու ժամանակը որոշուում է կառավարիչների

կտմքով, ևս և սեղանի բոլոր պատրաստութիւնը և ոչ ոք չհամարձակուի ասել թէ այս կերակուրը պակաս է և այն աւելի, կամ թէ երկար նստեցիք կամ կարճ. միայն ամենքն էլ պիտի ջանան որ հանդէսն ու հանդիսաւորները մարդկային քաղաքավարութեամբ լինեն, և ոչ թէ վայրենի շռավութեամբ և խելագարուած արբեցութեամբ, ինչպէս որ լինում է մի քանի հասարակութիւնների անկիրթ ժողովներում, այն էլ՝ շռավ, անկարգ և որովայնամոլ ծերերի խորհրդով, ի դատապարտութիւն իրանց հոգու և ալիքների և իբրև չարօրինակ երիտասարդներին ու մանուկներին. իսկ մատադի գինը կտան չորսի ձեռքը:

### ԼԳ.

Ժողովի անուան պատուի ու փառաւորութեան համար յաւիտենական և անջնջելի կանոն պիտի լինի, որ ոչ ոք չհամարձակուի, թէ 4 նախապատիւ ընտրուածները և թէ ամենքը՝ ծածկած գլխով մտնել խորհրդարանը, լանդգնողը ոչ միայն կդատապարտուի, այլև կը տուժէ կարեաց չափ: Բացի նորանից, ով յանկարծ պարզմտութեամբ և մոռացմամբ սխալուի: Այո՛ կդալ ժամանակ, որ ժողովի խորհրդարանը կունենալ նաև հսկող պահապաններ այսինքն գէժուրնի, և էլի յատուկ սպասաւորներ խորհրդարանը միշտ մաքուր պահելու և վառարանը, այսինքն փէչը վառելու:

### ԼԴ.

Ամենից վերջը, թէ ժողովի և թէ չորս կառավարիչների փոլթն ու ջանքն այն պէտք է լինի, որ մեմբանց հետ կապուած լինին խաղաղութեան, սիրոլ և բարեկամեցողութեան կապերով:

Ժողովը ամեն հաւատարմութեամբ պիտի սիրէ կառավարիչներին ինչպէս իրանց հայր, ինչպէս իրանց բարեկարգութեան երախտաւորներին, և իրանց կանոնի, գանձի, անուան և լաւիտենական փառաւորութեան աւանդապահներին։

Չորս կառավարիչներն էլ փոխադարձաբար պիտի սիրեն ժողովը, ինչպէս իրանց եղբայրներին ու որդւոց, իրանց ազգն ու տոհմ։ Պէտք է պարտաւորուին իրանց մահու չափ ճգնիլ ժողովի արդարութեան, խաղաղութեան և բարեբաղդութեան համար։ Զհպարտանան, համարելով իրանց ժողովի տէր, այլ համարեն իրանց ինչպէս եղբայր և սպասաւոր բոլոր ժողովի (ինչպէս և ժողովն էլ պէտք է ինչպէս իրանց իշխան համարէ նոցա)։

Այս կառավարիչները պիտի ուրախ լինեն ամբողջ ժողովի շնորհաց, քաղաքավարութեան և անդորրութեան վերաբ։ Եւ ընդհակառակն պիտի տրտմին, հոգան ու ցաւին պատուական ժողովի ապաշնորհութեան, անքաղաքավարութեան և շփոթի ու տարածալնութեան վերաբ։

Սոքա պիտի ամեն կերպ կառավարուին ժողովի հետ, որպէս զի շքեղ ու պանծալի երևին թէ իրանք և թէ ժողովը ոչ թէ միալն այլ և այլ ժողովների առաջ, այլ և ամբողջ ազգի առաջ թէ մերձաւոր և թէ հեռու տեղեր։ Աւելի այն պիտի լինի նոցա նպատակը, որ ինչպէս իրանց կենդանութեամբը, այսպէս էլ մահից լետոյ՝ փառաւոր համբաւ թողնեն և իրանց յաջորդների համար նախանձելի։

Զպէտք է նեղանան, չձանձրանան և վալր ի վերոլ խօսքերից։ տրտնջելով, ծածուկ ու լալտնի հակառակորդներից ու բամբասողներից վհատուելով լետ չը փախչեն։ Եւ արդարև, ամեն նորութիւն ինչ կարգի ու կառավարութեան էլ լինի, միշտ խրտնում է և զալրա-

նում, ինչպէս ամեն մտածողին լալտնի է։ Բայց երանի այն կառավարիչներին և իշխաններին, որոնք գիտեն համբերել և ամեն երկալնմտութեամբ տանել ապագայ բարեաց համար, որ ունին ժառանգել ամենայն բարեբաղդութեամբ ժողովն ու կառավարիչը։

Եւ ահա այս բարեկարգուած երջանիկ կարգադրութեանց լսողն ու կատարողը թող ստանալ երկնքի և երկրի Ամենաբարի Աստուածալետական Թագաւորից հոգու և մարմնի երջանկութիւն ալստեղ և հանդելձելում, ամենայն զարմով և զաւակներով։

Իսկ հակառակողներին նոյն Աստուածը տալ լուսաւոր միտք, հոգու իմաստութեան հանճար, որ նա իր հակառակասիրութիւնից լետ դառնալ, որ պատճառ չըլինի ալսպիսի Աստուածահաճոյ շինուածքի քակտման ու կործանման՝ և ոչ էլ շիջման ալսպիսի Աստուածավառ լուսատու ճրագի, լապագայ տարաբաղտութիւն իւր հոգու և մարմնի. և ոչ էլ լաւիտենական վատահամբաւութեան և հայհոյանքի, ի նախատինս իւր և իւր որդւոց վատաբաղտ գերեզմանի։

Ք. ա. թ. Ա.

